



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

5 ապրիլի 2019թ. թիվ 441

**Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ Տ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ  
ՔԱՐԱԶՈՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Ն

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Մուշեղ Գրիգորյանին և ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Տիգրան Հակոբյանին ս/թ ապրիլի 5-ին մեկ օրով գործուղել Քարաձոր՝ հանձնման-ընդունման աշխատանքներ իրականացնելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
Վ.ԽԱԶԱՏՐՅԱՆ**

2019թ. ապրիլի 5  
ք.Վանաձոր